Ուստի զիշխանս փոխադրիչք, որբոց իրաւունս ոչ առնեն, դատաստանի այրեաց ունկն ոչ դնեն. վասն այդորիկ այսպէս ասէ Տէր Տէր զօրութեանց՝ հզօրն Իսրայէլի, վա՜յ ձեզ հզօրքդ Իսրայէլի, զի ոչ դադարեսցի բարկութիւն իմ 'ի հակառակորդաց իմոց:

Արդարացուցանեն զամբարիշտ ն վասն կաշառոց, և զիրաւունս զողանան արդարոյն. վասն այնորիկ որպէս վառի եղէգն 'ի կայծականց հրոյ, այնպէս այրեսցին 'ի բորբոքելոյ բոցոյն:

Ընկեցին նոքա զամբարտաւանս բարբառին. առնուն ակն երեսաց վասն օգտի: վասն այնորիկ որք ասիցեն զչարն բարի և զբարին չար, որք դնիցեն զլոյսն՝ խաւար, և զխաւարն՝ լոյս, որք դնիցեն զքաղցրն՝ դառն, և զդառնն՝ քաղցր: Ս. Գ.էր.:

---

# ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

## ՏԱՂ ՎԱՍՆ ՁԱԽՈՒԻ(1)

Սիրտս 'ի փորս դողդղայ ահուս,
Ձեռուիս 'ի բան չերթար վախուս,
Թէ ինչպէս ճուղագ(2) 'տի տամ պապուս,
Որ կորուսիր եմ զիմ չախուս:

Խիստ զօրաւոր էր և ահեղ,
Մեծ մեծ խիար(3) կտրէր մէկ հեղ,
Ո՜ գնացի ես 'ի յայլ տեղ,
'Ի ու 'ի ծոցուս հանի այլ տեղ:

Չախուս ունէր ալէկ աստագ(4),
Օ՜օրըն կենէր հետ ինձ անկապ,
Գինով արին ու առին 'ի խափ,
Լո՛ւկ ձգեցին զչախուս 'ի յափ:

Չախուս կու տայր ինձի խըրատ,
Թէ չոր հացէն կացիր 'ի զատ.
Գինեմ որ խէր չանէր ախտալ,
Ճամսն(1) մունէթ(2) բաւնան փիրալ:

Կակուղ լօշեր լինի տաք հաց,
Ուրախացիր զերկանըդ բաց,
Խըստ քարող տայր տանտիկնաց,
Խուզով ճմլեն զենքն 'ի հիւրաց:

Երբոր երթէ հարկու մէճլիս(3),
Չախուս կառէր դարպուէ 'ի յիս,
Եղէկ պատառ որ նըկատիս,
Եռանց ինձի ձեռք չի տանիս:

Խիստ էնէպով տաշէր չոր միս,
Բաջալերէր 'ւ յորդորէր զիս.
Օգտաւէթն 'ի լէք տուր 'ի յափիս,
Կե՛ր ու խմէ՛, հանգչի հոգիս:

Չախուս 'ի հետս էր խիստ գըթով,
Բարի խըրատ կու տայր սիրով,
Թէ մի՛ նստիր 'ի մարդու քով,
Որ կշտանաս քիչ մի գինով:

Խնդըրս կու գաս ակռայ չուծիս,
Ընկեր մըրկ երբ հանդիպիս,
Եգահութեամբ 'ի կուլ տանիս,
Փակչէ պօղազդ(4), լինիս ճառիս(5):

Չախուս 'ի հետս էր խիստ սիրուն,
Երբոր երթինք 'ի յայլոց տուն,
Ճամսն տանէյր զմիսն 'ի յիփուն,
Չթողուր տանի զձեռս 'ի մածուն:

Վասն զփարդապետ էր զիմ չախուս,
Օ՜օրըն խըրատ տայր ծըխերուս,
Երբ տընօրհնէքըն գայր տուներս,
Տապկած ձկներ բերէք ափըուս:

Չախուս առաց իմ տէրն դու,
Օ՜խ մի ցուցնէր ամէն մարդոյ.
Պատրաստ պահէ զքեզ 'ի զինու,
Եղէզի չատս զիս գողնալու:

Երգըս գրած մարախրոսի,
Չախուս յաշըխ(6) էր չոր մսի.

(1) Զմելի: — (2) Պատառիան. — (3) Վարունգ: — (4) Կտրող համ բարք բաղցանդր.

(1) Անդէն: — (2) Բարկիք կամ չհարբ և կամ յանդիմանութիւն:— (3) Խնջոյք:— (4) Կոկորդ: — (5) Խայտառակ:— (6) Սիրահար:

Հարսնիք տարան զիս նոր փեսի,
Խեր չէ տեսայ քան կորուսի։
Աստուած ինձ քաղցր էր ՚ւողորմած,
Զախուս գտայ, չելաւ ձեռաց,
Եւ որ ուսին յամեն իրաց,
Տեսնի զօղոյր սիրտս ՚ի գիմաց։
Զախուս տասց խիստ մի հօգար,
Ուրախացիր եղբայր գտար.
Մինչ ՚ի յունիս յուլիս զըժար՝
Որ կերցնեմ քեզ մեղըով խիար։
Զախուս համեստ խօսկր սիրով,
Հետ տանտիկնոց նստէր ՚ի քով.
Քարող խըրատ կու տայր յոլով՝
Մեղըիկ բերէք կաթին սերով։
Ոչխարի միս լինի փուշտայ,
Ու տաքգեղով շինած քուֆթայ.(1)
Նստիր ՚ի քովն յորդորէ զնոյ
Տուր գաւաթիկ մ՛ այլ ՚ի վերայ։
Գեղին էրէց ժամանակաց,
Մակայն առէր յամէն իրաց,
Զլինի յառջեն բերէք չոր հաց
Ձեռքըս չերթայր ՚ի յամօթայ։
Ի յընթեանունըն այս տաղիս՝
Տամ առողջին շատ ողորմիս.
Երկու օրէկ որ թարկեց(2) զիս
Յակոբ չկայ ծընծըղուկ մի միս։
Յաշխարհս այլ խենթ չկայր քան զիս
Հուաս(3) կալայ անդէտ բանիս.
Նոյնդամ մարդիկք՝ նախատեն զիս,
Քանի նստին ՚ի մեծ մըձլիս։

(ՀԻՆ ՅԵ—ԳԷՐ.)

## ԵՂՋԵՐՈՒՆ ԵՒ ԽԵՑԳԵՏԻՆ

Եղջերուն և խեցգետին բարեկամացան, և արարին ցանք ՚ի միասին, և ՚ի ժամ հնձոյն աշխատեցան ՚ի մէկ տեղ որպէս օրէն էր հողագործացն, և արարին շեղջ ցորենոյ. և ասէ եղջերուն ցխեցգետին, շահնա և սանուտերն զեղծս պահանջ են ինձ որ ես երկու առնում և դուն մէկ. և խաժամեցաւ խեցգետին ՚ի վերայ բանիցն, և յերկարելոյ կոխեն ՚ի մէջ իւրեանց, և սկսան ասել և տարակուսած կային. ասէ խեցգետին ընդ եղջերուն՝ թէ արեկ երթիցուք ՚ի հեռու որ տեղի և փաղենք, և որ յառաջ հասանի ՚ի շեղջս քանզընկերին, նա առնու զերկու բաժինն ի ցորենոյն. և զայն լուեալ եղջերուն յոյժ ուրախացաւ, և գնացին հեռացան ՚ի կալէն. Խեցգետին յառաջ կացոյց զԵղջերուն և ասէ, փաղեր յառաջ քան զիս, և խեցգետին բռնեաց յագուեայն ՚ի ծայրս ագոյն, գնաց զհետ նորա. զոր ՚ի բազում խնդութեան եղջերուն ոչ կարաց իմանալ. իբրև եհաս առաջի կալոյն, ասէ Եղջերուն ՚ի միտս իւր, դառնամ և տեսանեմ զխեցգետին ՚ի զալ է, և ի դառնալն հասաւ ծայր ագոյն ՚ի տեղին ՚ի վերայ շեղջին. և առեալ Խեցգետին զձայնն սկսաւ չափել և ասել ՚ի յԱրար լեզուն՝ պիսմիլահ վահիտ, որ թարգմանի հայերէն՝ յանուն Աստուծոյ մէկ. և տեսեալ զխեցգետին Եղջերուն ՚ի վերայ շեղջին, զարմացաւ և ասէ, զո՞ր ընթացութեամբ զոր գնացեր՝ զԱրար լեզուդ ո՞վ ուսոյց քեզ։ Եւ այսպիսի իմաստութեամբ Խեցգետին յաղթեաց զԵղջերուն, և էառ զերկու բաժին ցորենոյն։

## ԱԶԴՔ

Ներկայ ամսագրոյս ա. թերթը պատուելեն զէնի բաղձալով Հոկտ. և Նոյ. ամսագիրները միացնել և ընդարձակ և հարուստ նիւթեր պարունակել, վասնորոյ ձեռնարկը՝

(1) Շինած մսով կերակուր.—(2) Թողուց։—(3) Իղձ կամ փափաք։